

ՀԱՆԳԻՍՏ՝ ԳԵՐ. Տ. ՅՈՎՍԷՓ ԵՊՍ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին զրկուած հեռագրէ մը կ'իմանանք վախճանումը Ս. Էջմիածնայ միաբան՝ Գեր. Տ. Յովսէփ Եպիսկոպոս Կարապետանի: Տխուր այս պարագան վերջ մը կը դնէ բազմախոնջ՝ եւ սազնապահար իր կեանքին:

Հանգուցեալ Սրբազանը ծնած է Պոլիս: Առաջին անգամ է քաղաքին Ազգային Վարժարանը, որմէ ետք իր ճննգավայրի քաղաքային դեղագործական վարժարանը: Սակայն զգալով իր մէջ եկեղեցականի կոչումը, եկած է Երուսաղեմ առաջնորդելու ժառանգաւորաց վարժարանին: Սակայն հօր պնդումներուն վրայ, Մասքէոս Արքեպ. Իզմիրլեանի հետ կը վերադառնայ ճննգավայր եւ շարունակելով դեղագործական դասընթացները, կ'աւարտէ ու կը ստանայ վկայական:

Առաջին Համալսարանային Պատերազմէն ետք կը մեկնի Էջմիածին եւ եկեղեցական ասպարեզին յարմարութիւններ ունենալուն համար, կը ձեռնադրուի կուսակրօն ֆահանայ Գեորգ Արքեպ. Զեօրէնեանէ:

Ժամանակ մը կը վարէ Պոլսոյ Պաշտօնաւարի եկեղեցիին ֆարոգիչի պատօնը. ապա կ'անցնի Հապեփոսան իբրեւ Առաջնորդ:

Խորէն Արքեպ. Ի Կար. ընտրութենէն վերջ կը ձեռնադրուի Եպիսկոպոս:

Հանգուցեալը զաւակն էր Պոլսոյ երբեմնի դասական նախարարութեան գործակա-
սար Կարապետ Է. Զիվերի: Անգլանիկ եղբայր՝ (այժմ հանգուցեալ), դասաւոր եւ իրա-
ւաբան Լեւոն Զիվեր. կրտսեր եղբայրները, Գրիգոր Նպս. Կարապետեան եւ Տօֆ. Սեփան
Զիվեր:

«Սիոն», Գեր. հանգուցեալի միաբանակից եղբայրներուն եւ սգակիր պարագաներուն
կը յայտնէ արտաքին ցաւակցութիւն, եւ իր հոգւոյն յաւիտենական հանգիստ:

Օրհնութիւն իր յիշատակին եւ հանգիստ իր հոգւոյն:

ՄԱՀ՝ ՏԻՐԱՄԱՅՐ ՆՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՅԵԱՆԻ

Խոր ցաւով կը տեղեկանանք քէ Գահիրէի մէջ իր մահկանացուն կնքած է Տիրամայր
Նուարդ Թումայեանը: Տիրամայր՝ Ս. Արթուրոս Միաբաններէն՝ Լոնտոնի հոգեւոր հովիւ
Գեր. Տ. Պապ վրդ. Թումայեանի:

Այս առիթով «Սիոն», յանուն Տեղապահ Ս. Հօր եւ բովանդակ Միաբանութեան, իր
վճակցութիւնը կը յայտնէ Գեր. Տ. Պապ վարդապետին, իր ունեցած այս դառն կորուս-
տին համար, մաղթելով որ Տէրը լոյսերու մէջ հանգչեցնէ Տիրամայր Նուարդ Թումայեանի
առաքինի եւ բարի հոգին եւ ասէն մնացող իր սիրասուն զաւակներուն պարգեւէ Սուրբ
Հոգւոյն մխիթարութիւնը եւ իրենց բարի փափաքներուն իրագործումը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.